«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ

Առանձին ֆինանսական հաշվետվություններ

2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Առանձին ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվություն 1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին առանձին հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին առանձին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին առանձին հաշվետվություն 4

Առանձին ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն 5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները 6
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների 8
4. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ 17
5. Հասույթ 19
6. Վաճառքի ինքնարժեք 21
7. Վարչական ծախսեր 21
8. Իրացման ծախսեր 21
9. Այլ ծախսեր 21
10. Այլ եկամուտ 22
11. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր 22
12. Շահութահարկ 22
13. Հիմնական միջոցներ 25
14. Կապակցված կողմերին տրամադրված փոխառություններ 26
15. Ներդրումներ դուստր և ասոցիացված ընկերություններում 28
16. Պաշարներ 28
17. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 28
18. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 28
19. Կապիտալ և պահուստներ 29
20. Ստացված վարկեր և փոխառություններ 29
22. Իրական արժեք և ռիսկերի կառավարում 31
23. Հանձնառություններ 37
24. Պայմանական դեպքեր 38
25. Կապակցված կողմեր 38

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) առանձին ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին առանձին հաշվետվությունները, ինչպես նաև առանձին ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից առանձին ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի, ներառյալ Անկախության միջազգային ստանդարտները* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ Հանգամանք

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա առանձին ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի հուլիսի 14-ին արտահայտել է չձևավափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը առանձին ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Առանձին ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը առանձին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ առանձին ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն առանձին ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն առանձին ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով առանձին ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել առանձին ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը,
- Գնահատում ենք առանձին ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև առանձին ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Կառավարման օղակներում ներգրավված անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

30 հունիսի, 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

հազ. Դրամ	*Ծան.*	*2022թ.*	*2021թ.*
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	8,445,865	10,069,016
Ոչ նյութական ակտիվներ		17,285	534
Տրամադրված փոխառություններ	14	8,596,710	–
Ներդրում դուստր և ասոցիացված ընկերություններում	15	6,715,985	5,771,857
Հետաձգված հարկային ակտիվ	12	507,668	–
Ոչ ընթացիկ ակտիվներ		**24,283,513**	**15,841,407**
Պաշարներ	16	166,600	144,571
Տրամադրված փոխառություններ	14	1,601,511	1,788,311
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	6,376,129	15,009,137
Ընթացիկ հարկային ակտիվներ		–	61,212
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	61,261	27,577
Ընթացիկ ակտիվներ		**8,205,501**	**17,030,808**
Ընդամենը ակտիվներ		**32,489,014**	**32,872,215**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ		7,814,628	7,814,628
Կապիտալի բաշխում		(4,131,536)	(1,095,919)
Պահուստներ		7,573,289	9,069,657
Չբաշխված շահույթ		12,383,020	10,102,492
Ընդամենը սեփական կապիտալ	19	**23,639,401**	**25,890,858**
Պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	–	125,373
Ստացված վարկեր և փոխառություններ	20	2,369,649	–
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	23	128,574	–
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**2,498,223**	**125,373**
Ստացված վարկեր և փոխառություններ	20	2,469,701	3,366,367
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	3,869,191	3,473,473
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	23	12,498	16,144
Ընթացիկ պարտավորություններ		**6,351,390**	**6,855,984**
Ընդամենը պարտավորություններ		**8,849,613**	**6,981,357**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**32,489,014**	**32,872,215**

Հաստատվել և ստորագրվել է Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին:

Սուրեն Կարապետյան
Գլխավոր տնօրեն

Համլետ Սահակյան
Գլխավոր հաշվապահ

5-25 ծանոթագրությունները կազմում են առանձին ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին առանձին հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

հազ. Դրամ	***Ծան.***	***2022թ.***	***2021թ.***
Հասույթ	5	30,141,380	51,528,527
Վաճառքի ինքնարժեք	6	(27,363,944)	(50,803,861)
Համախառն շահույթ			
Այլ եկամուտ	10	213,636	427,082
Վարչական ծախսեր	7	(585,739)	(559,343)
Իրացման ծախսեր	8	(135,302)	-
Այլ ծախսեր	9	(421,253)	(208,178)
Գործառնական գործունեությունից շահույթ		**1,848,777**	**384,227**
Ֆինանսական եկամուտ	11	1,110,626	327,191
Ֆինանսական ծախս	11	(325,267)	(148,388)
Զուտ ֆինանսական եկամուտ		**785,359**	**178,803**
Շահույթ նախքան շահութահարկը		**2,634,136**	**563,030**
Շահութահարկի գծով ծախս	12	(430,629)	(34,308)
Հաշվետու տարվա շահույթ		**2,203,507**	**528,622**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Հիմնական միջոցների վերագնահատում	13	(1,730,911)	**–**
Համապատասխան շահութահարկ		311,564	**–**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք Տարվա համար առանց շահութահարկի		**(1,419,347)**	**–**
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ եկամուտ		**784,160**	**528,622**

5-25 ծանոթագրությունները կազմում են առանձին *ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին առանձին հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

հազ. Դրամ	***Կանոնադրական կապիտալ***	***Կապիտալի բաշխում***	***Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ/նվազում***	***Չբաշխված շահույթ***	***Ընդամենը***
2021թ. Հունվարի 1-ի դրությամբ	**7,814,628**	**(865,978)**	**9,149,307**	**9,494,219**	**25,592,176**
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար					
Հաշվետու տարվա շահույթ	**-**	**-**	-	528,622	**528,622**
Այլ համապարփակ արդյունք					
Վերագնահատումից արժեքի աճի տեղափոխում չբաշխված շահույթի կազմ	**-**	**-**	(79,650)	79,651	**–**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**-**	**-**	**(79,650)**	**608,273**	**528,623**
Գործառնություններ սեփականատերերի հետ					
Այլ բաշխումներ	**-**	(229,941)	-	-	**-**
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**-**	(229,941)	**-**	**-**	**-**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**7,814,628**	**(1,095,919)**	**9,069,657**	**10,102,492**	**25,890,858**
2022թ. Հունվարի 1-ի դրությամբ	**7,814,628**	**(1,095,919)**	**9,069,657**	**10,102,492**	**25,890,858**
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար					
Հաշվետու տարվա շահույթ	**-**	**-**	-	**2,203,507**	**2,203,507**
Այլ համապարփակ արդյունք					
Վերագնահատումից արժեքի աճի տեղափոխում չբաշխված շահույթի կազմ	**-**	**-**	**(1,496,368)**	**77,021**	**(1,419,645)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**-**	**-**	**(1,496,368)**	**2,280,528**	**783,862**
Գործառնություններ սեփականատերերի հետ					
Այլ բաշխումներ	**-**	(3,035,617)	-	**-**	(3,035,617)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**-**	**(3,035,617)**	-	**-**	**(3,035,617)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,814,628**	**(4,131,536)**	**7,573,289**	**12,383,020**	**23,639,401**

5-25 ծանոթագրությունները կազմում են առանձին ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Դրամական միջոցների հոսքերի մասին առանձին հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Շահույթ տարվա համար	2,203,507	528,622
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա	24,812	36,981
Հիմնական միջոցների օտարումից վնաս	5,992	–
Բաժնետոմսերի օտարում	–	49,995
Եկամուտ երաշխավորություններից	(87,758)	(331,044)
Պաշարի արժեզրկման հակադարձում	(55,740)	–
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստ	107,980	–
Զուտ ֆինանսական եկամուտ	(785,359)	(178,803)
Շահութահարկի գծով ծախս	430,629	34,408
Փոփոխություններ հետևյալ հոդվածներում.		
Պաշարներ	33,712	27,172
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	8,490,002	2,000,502
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	395,148	(2,212,620)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը	**10,762,925**	**(44,787)**
Վճարված շահութահարկ		(19,123)
Վճարված տոկոսներ	(319,366)	(39,859)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	**10,443,559**	**(103,769)**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(137,974)	(46,808)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(17,463)	(559)
Դուստր ընկերությունների ձեռքբերում	(944,129)	(4,225,000)
Տրամադրված փոխառություններ	(13,467,140)	(950,000)
Տրամադրված փոխառությունների մարում	1,564,675	1750,961
Ստացված տոկոսներ	245,549	8,317
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	**(12,756,482)**	**(3,463,089)**
Դրամակաի հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փախառություններից	6,730,929	5,154,978
Վարկերի և փոխառությունների մարում	(4,457,026)	(1,712,480)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	**2,273,903**	**3,442,498**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	**(39,020)**	**(124,360)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ	27,577	151,499
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	72,704	438
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**61,261**	**27,577**

(հազար ՀՀ դրամ)

1. Հիմնական գործունեության նկարագրություն

ա) Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ

Այս առանձին ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի («Ընկերություն») համար:

Ընկերությունը հիմնադրվել է 2004թ. սեպտեմբերի 1-ին՝ Ռուսաստանի Դաշնության Դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության թիվ 291-ռ որոշման համաձայն:

Ընկերության հիմնական գործունեությունն էլեկտրաէներգիայի արտադրությունն է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կայանում: Արտադրված էլեկտրաէներգիան վաճառվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին:

Ընկերության միակ սեփականատերն է «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ն, իսկ վերջնական հսկող անձն է պրն. Սամվել Կարապետյանը:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 25-ում:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Հրազդան, Գործարանային փ. 1:

Աշխատակիցների միջին թվականը 2022 թվականին կազմել է 478 հոգի (542 հոգի՝ 2021 թվականին)

բ) Գործարար միջավայրը Հայաստանում

Ընկերությունն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք հանդիսանում են զարգացող շուկաներ: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառացած մարտահրավերներին: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության բռնկումը, դրան հաջորդած Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ հրադադարի պայմանավորվածությունը և, հետագայում, Հայաստանի Հանրապետության տարածքում հակամարտության սրումը ավելի են մեծացրել բիզնես միջավայրի անորոշությունը:

Հայաստանի բիզնես միջավայրի վրա ազդեցություն է ունեցել նաև ռուս Ուկրաինական հակամարտությունը, ինչը սկսվել է 2022թ-ին: Ուկրաինայում պատերազմական գործողությունների արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմական գործողությունների սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ:

Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանը Հայաստանի առանցքային առևտրային գործընկերն է: Ակնկալվում է, որ պատերազմական գործողությունները էական ազդեցություն կունենան նաև Հայաստանի տնտեսության վրա: Քանի որ պատերազմը դեռ շարունակվում է, անհնար է արժանահավատորեն գնահատել իրավիճակի ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա՝ հաշվի առնելով առկա անորոշությունը ընդհանուր տնտեսության վրա ազդեցության մեծության գնահատման տեսանկյունից: Ընկրության ղեկավարությունը գտնում է, որ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ ներկայիս իրավիճակում իր գործունեության կայունությունն ապահովելու համար:

(հազար ՀՀ դրամ)

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

ա) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընկերությունը առաջին անգամ կիրառել է որոշակի ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Կազմակերպությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել:

Անբարենպաստ պայմանագրեր - Պայմանագրի կատարման ծախսեր – ՀՀՄՍ 37 փոփոխություններ

Պայմանագիրը համարվում է անբարենպաստ, եթե այդ պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսերը (այսինքն, այն ծախսերը, որոնց մասով Կազմակերպությունը չի կարող խուսափել պայմանագրի առկայության դեպքում) գերազանցում են դրա շրջանակներում ակնկալվող տնտեսական օգուտները: Փոփոխությունները հստակեցնում են, որ պայմանագրի անբարենպաստ կամ վնասաբեր լինելը գնահատելիս, կազմակերպությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ինչպես լրացուցիչ ծախսերը (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և նյութերի ծախսերը), այնպես էլ պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերի բաշխումը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածությունը և պայմանագրի կառավարման և վերահսկողության ծախսերը): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում այդ ծախսերում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսերը հստակորեն գանձվում են պայմանագրի մյուս Կողմից:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հիմնական միջոցներ – մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

Այս փոփոխությունը չի թույլատրում կազմակերպություններին հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում, որն անհրաժեշտ է ղեկավարության կողմից նախանշված նպատակով այն գործարկելու համար, արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է տվյալ միավորների վաճառքից մուտքերը և տվյալ միավորների արտադրման նպատակով ծախսումները շահույթում կամ վնասում: Անցումային դրույթների համաձայն՝ Կազմակերպությունը կիրառում է այս փոփոխությունները հետընթաց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք մատչելի են օգտագործման համար ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ չի իրականացվել հիմնական միջոցներով արտադրված այդպիսի միավորների վաճառք, որոնք մատչելի են եղել ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ - Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեստում ներառվող վճարներ

Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ փոխառուի կամ փոխատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Համանման փոփոխություն չի առաջարկվում ՀՀՄՍ 39 Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում ստանդարտի համար:

Անցումային դրույթների համաձայն՝ Ընկերությունը փոփոխությունը կիրառում է այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար (նախնական կիրառման ամսաթիվը): Այս փոփոխությունները

(հազար ՀՀ դրամ)

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

ա) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Ընկերության ֆինանսական գործիքներում փոփոխություններ չեն կատարվել:

բ) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս առանձին ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունը իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («ՀՀ դրամ»), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այս առանձին ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ: Այս առանձին ֆինանսական հաշտվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, և բոլոր արժեքները կլորացված են մոտ հազարերորդականներով, եթե այլ բան նշված չէ:

դ) Չափման հիմունքներ

Առանձին ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

ե) Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջվում են իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Լրացուցիչ տեղեկատվությունը իրական արժեքի գնահատման վերաբերյալ ներկայացված է Ծան. 22-ում:

(հազար ՀՀ դրամ)

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

գ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Առանձին ֆինանսական հաշվետվությունները «ՖՀՄՍ» պահանջներին համապատասխան պատրաստելու համար Ընկերությունը ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում կատարվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հիմնական միջոցների մաշվածության հետ կապված հաշվապահական հաշվառման գնահատումների կիրառման ժամանակ կատարված ղեկավարության ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն առանձին ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 13-ում՝ «Հիմնական միջոցներ»:

Տեղեկատվությունը կապիտալի բաշխումների հետ կապված հաշվապահական հաշվառման սկզբունքների կիրառման ժամանակ ղեկավարության կողմից կատարված ենթադրությանների վերաբերյալ, որոնք նշանակալի ազդեցություն ունեն առանձին ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 19-ում՝ «Կապիտալ և պահուստներ»:

է) Ներդրումներ դուստր և ասոցիացված ընկերություններում

Դուստր և ասոցիացված ընկերություններում ներդրումները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած ճանաչված արժեզրկումից կորուստները:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունները հետևողականորեն կիրառվել են առանձին ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 5 կետում:

բ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսը ընդգրկում են.

- Տոկոսային եկամուտ;
- Տոկոսային ծախս;
- Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը;
- Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման ծախսը:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների (շարունակություն)

բ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր (շարունակություն)

- Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ,
- Ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Փոխարժեքային տարբերությունից առաջացող օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս կախված այն հանգամանքից, թե որ դիրքում են կատարվում արտարժույթի փոփոխությունները՝ զուտ օգուտի, թե՝ զուտ վնասի:

գ) Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով, փոխարկվում են կիրառելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

դ) Աշխատակիցների հատուցումներ

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- Աշխատավարձերը և պարգևավճարները,
- Վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
- Սոցիալական ապահովության մասհանումները,
- Ոչ դրամային հատուցումները:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- Կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- Չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների (շարունակություն)

դ) Աշխատակիցների հատուցումներ (շարունակություն)

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

ե) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված տարրերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է հաշվեկշռային մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց՝ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ՝

- Երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գուդվիլի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի/վնասի, ոչ էլ հարկվող շահույթի/վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և վնասները հնարավոր կլինի օգտագործել՝ բացառությամբ հետևյալ դեպքի՝

- Երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի/վնասի, ոչ էլ հարկվող շահույթի/վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի, որի դիմաց կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով,, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները կհամարվեն՝ հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենքների) վրա:

Հետաձգված հարկը, որը վերաբերվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներին կամ սեփական կապիտալի հոդվածներին, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ սեփական կապիտալում, և ոչ թե շահույթում կամ վնասում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների (շարունակություն)

ե) Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների հետ հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկերը վերաբերում են միևնույն հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:

Ապագա հարկվող շահույթի առաջացման մասին ենթադրությունները կախված են Ղեկավարության՝ ապագա դրամական հոսքերի գնահատումներից: Ապագա հարկվող շահույթի այս գնահատումները հիմնված են գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վրա (որոնց վրա ազդում են արտադրության և վաճառքի ծավալները, ապրանքների գները, պահուստները, գործառնական ծախսերը, փակման և վերականգնողական ծախսերը, կապիտալ ծախսումները, շահաբաժինները և այլ կառավարչական գործարքները): Ապագա դրամական միջոցների հոսքերի և հարվող շահույթի՝ գնահատումներից նշանակալի տարբերությունը կազդի հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության զուտ հետաձգված հարկային ակտիվների օգտագործման հնարավորության վրա:

զ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցները ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հիմնական միջոցների իրական արժեքների փոփոխություններից: Եթե հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն հիմնական միջոցի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն հիմնական միջոցի ուղղակիորեն սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործմանը պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործմանը պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական ստացման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների (շարունակություն)

զ) Հիմնական միջոցներ(շարունակություն)

Ստորև ներկայացված են նշանակալի հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար.

-Շենքեր	32 ամիս
-Մեքենաներ և սարքավորումներ	32 ամիս
-հարմարանք և կցամասեր	32 ամիս
-այլ	32 ամիս

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

է) Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքը մի պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և չափում

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվների դասակարգումը կախված է վերջիններիս դրամական հոսքերի բնույթից և դրանք կառավարելու Ընկերության բիզնես մոդելից: Բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար Ընկերությունը օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում՝ Ընկերությունը սկզբնապես ֆինանսական ակտիվը չափում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող չէ:

Որպեսզի ֆինանսական ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, անհրաժեշտ է, որ վերջինս առաջացնի դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումները» (SPPI): Այս գնահատումը կոչվում է SPPI թեստ և կատարվում է գործիքի մակարդակով: Ֆինանսական ակտիվները, որոնց դրամական հոսքերը չեն բավարարում SPPI-ին, դասակարգվում և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ անկախ բիզնես մոդելից:

Ընկերության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը արտացոլում է Ընկերությոան ֆինանսական ակտիվների կառավարումը դրամական հոսքեր ձևավորելու նպատակով: Բիզնես մոդելը սահմանում է, թե արդյոք դրամական հոսքերը ձևավորվում են պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ միաժամանակ՝ երկուսից:

Ֆինանսական ակտիվների գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորություններով (կանոնավոր գործարքներում) սահմանված ժամկետի ընթացքում, ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Ընկերությունը ձեռք է բերել կամ վաճառել ակտիվը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների (շարունակություն)

Է) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Հետագա չափում

Հետագա չափման նպատակներով ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ դասերից մեկում.

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ),
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում:

<u>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ)</u>

Ընկերությանը առավել բնորոշ է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների դասը: Ընկերությունը ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարված են ստորև թվարկված երկու պայմանները.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահելը՝ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հետագա չափումներն իրականացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ենթակա են արժեզրկման գնահատման: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե ակտիվը ապաճանաչվում է, վերանայվում է կամ արժեզրկվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և,
- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»),
- «Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

Է) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը հիմնականում ապաճանաչվում է (այսինքն՝ հանվում է Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից), երբ.

- Ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը, կամ,
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ստանձնել է ստացված դրամական միջոցների հոսքերը ամբողջությամբ երրորդ կողմին վճարելու պարտականություն առանց էական ուշացման փոխանցման համաձայնագրի համաձայն, և ա) Ընկերությունը փոխանցել է, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ բ) Ընկերությունը ոչ փոխանցել է, ոչ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, բայց փոխանցել է ակտիվի վերահսկողությունը:

Երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ձեռք է բերել փոխանցման համաձայնագիր, վերջինս պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանել ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները: Երբ Ընկերությունը ոչ փոխանցել է, ոչ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ոչ էլ փոխանցել է ակտիվի վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվը իր շարունակվող ներգրավվածության չափով: Այս դեպքում, Ընկերությունը նաև ճանաչում է դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափվում են այն հիմքով, որը արտացոլում է Ընկերության պահպանած իրավունքներն ու պարտականությունները:

Շարունակվող ներգրավվածությունը, որը ձեռք է բերում փոխանցված ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքի և այն առավելագույն արժեքից նվազագույնով, որը Ընկերությունից կարող է պահանջվել մարել:

Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր, կամ անհրաժեշտության դեպքում ածանցյալ գործիքներ՝ նախատեսված որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների և կրեդիտորական պարտքերի դեպքում՝ հանած ուղղակիորեն վերագրելի գործարքային ծախսերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը և ստացված վարկերն ու փոխառությունները:

Հետագա չափում

Հետագա չափման նպատակով ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են երկու տեսակի.

- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(է) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Ընկերությունը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող որևէ ֆինանսական պարտավորություն: Ընկերության ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ դրա հետ կապված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցրած է ճանաչվում: Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է միևնույն փոխատուի՝ էականորեն տարբեր պայմաններով մեկ այլ պարտավորությամբ, կամ գոյություն ունեցող պարտավորության պայմանները էականորեն ձևափոխվում են, ապա այդպիսի փոխարինումը կամ ձևափոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, և համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական գործիքների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու, միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(ը) Կանոնադրական կապիտալ

Ընկերության բաժնեմասերը ենթակա են մարման մասնակցի ընտրությամբ՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Ընկերությունը պարտավոր է վճարել դուրս եկող մասնակցին վերջինիս դուրս գալու տարվա ընկերության զուտ ակտիվների նրա բաժնեմասը դրամական միջոցներով, կամ մասնակցի համաձայնության դեպքում բնաիրային տեսքով:

թ) Արժեզրկում

Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ֆիանանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արեժքով չափվող ֆինանսական ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ ընկերությունը որոշում է թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումներ և ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ընկերության անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկությունը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

թ) Արժեզրկում (շարունակություն)

Ընկերությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե

- Հավանական չէ, որ հաճախորդը ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Ընկերության նկատմամբ, եթե ընկերությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- Ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտային կորուստներն այն ակնկալվող պարտային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտային կորուստների գումարն ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մի մասն է, որն իրենից ներկայացնում է այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսատվից հետո 12-ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում եթե գործիքի ակնկալվող ամբողջ ժամկետը պակաս է 12-ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում ընկերությունը ենթարկված է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորստի չափում

Ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են պարտքային կորուստների հավանականությամբ կշռված պարտքային կորուստների գնահատականը: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող սպասվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը):

Անկալվող ֆինանսական կորուստները զեղչվում են ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանասական ակտիվները պարտային առումով արժեզրկված լինելու տեսակնյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- Փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարություններ,
- Պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը 90 օր ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն ընկերությունը այլ պայմաններում չէր դիտարկի,
- Հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

թ) Արժեզրկում (շարունակություն)

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆիանանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ ընկերությունը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համր ընկերությունը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքը դուրս գրելու քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան 180 օր ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գումարների փոխհատուցման անցյալ ժամանակաշրջանների փորձը: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար ընկերությունն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի առանձին գնահատում՝ ելնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Ընկերութունը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ դուրս գրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար*:*

ժ) Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ

Տրամադրված ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունը Ընկերությունը սկզբնական ճանաչում է երաշխավորության իրական արժեքով և հետագայում չափում է ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստի գումարից և սկզբնապես ճանաչված գումարի ու, կիրառելի լինելու դեպքում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված եկամտի կուտակային գումարի տարբերությունից առավելագույնով:

Երբ Ընկերությունը տրամադրում է ֆինանսական երաշխավորություն կապակցված կողմին նույնիսկ առանց հատուցման, համարվում է, որ մայր կազմակերպությունը գործում է բաժնետիրոջ կարգավիճակով և ֆինանսական երաշխավորության տրամադրումը ճանաչվում է որպես կապիտալի բաշխում:

Ի) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է երբ ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվոմ են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորության հատուկ ռիսկերը: Զեղչի գծով ծախսը ճանաչվում է ֆինանսական ծախս:

4. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Ընկերությունը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

(հազար ՀՀ դրամ)

4. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

ՀՀՄՍ 1 փոփոխություն. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ և ոչ ընթացիկ

2020 թվականի հունվարին ՀՀՄՍ Խորհուրդը փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 1-ի 69-ից 76-րդ պարագրաֆներում՝ հստակեցնելու պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են.

- Ինչ է նշանակում մարումը հետաձգելու իրավունք,
- Որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- Որ դասակարգման վրա չի ազդում կազմակերպության՝ հետաձգելու իրավունքը օգտագործելու հավանականությունը,
- Որ միայն այն դեպքում, երբ փոխարկելի պարտավորության մեջ ներդրված ածանցյալ գործիքն ինքնին հանդիսանում է բաժնային գործիք, ապա պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց: Ընկերությունը ներկայումս գնահատում է ընթացիկ գործունեության վրա փոփոխությունների հնարավոր ազդեցությունը:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է: Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021թ.-ի փետրվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները ՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման

քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Քանի որ

Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Ընկերությունը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա:

(հազար ՀՀ դրամ)

5. Հասույթ

(ա) Հասույթի ուղղություններ

Ընկերությունը հասույթը ստանում է հիմնականում էլեկտրաէներգիայի վաճառքից:

հազ.դրամ	***2022թ.***	***2021թ.***
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	30,141,380	51,528,527
Ընդամենը հասույթ	**30,141,380**	**51,528,527**

(բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ ծառայությունների հիմնական տեսակների և հասույթի ճանաչման ժամկետների:

հազ.դրամ	***2022թ.***	***2021թ.***
Ծառայությունների հիմնական տեսակներ		
Էլեկտրաէներգիայի վաճառք	27,312,652	49,001,635
Հզորության վաճառք	2,768,881	2,482,767
Էլեկտրաէներգիայի փոխանցման և այլ ծառայություններ	59,847	44,125
	30,141,380	**51,528,527**
Հասույթի ճանաչման ժամկետներ		
Ժամանակի ընթացքում փոխանցված ապրանքներ	30,141,380	51,528,527
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	**30,141,380**	**51,528,527**

(գ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականությունը

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

(հազար ՀՀ դրամ)

5. Հասույթ (շարունակություն)

(գ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականությունը (շարունակություն)

Ծառայության տեսակը	**Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները**	**Հասույթի ճանաչման քաղաքականությունը**
Էլեկտրաէներգիայի վաճառք	Էլեկտրաէներգիայի վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է հաճախորդին էլեկտրաէներգիա վաճառելուց հետո: Վաճառքի պայմանագիրը գործում է մինչև վաճառողի լիցենզիայի գործողության ժամկետի լրանալը, այնուամենայնիվ, սակագները և ծավալները սահմանվում են տարեկան կտրվածքով՝ պայմանագրի հավելվածներով: Հաշիվները ներկայացվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա ն վճարման 30 օրվա ընթացքում:	Որպես գործնական բնույթի պարզեցում՝ ընկերությունը հասույթը ճանաչում է այն գումարով, որի չափով իրավունք ունի հաշիվ ներկայացնել, եթե այդ գումարն ուղղակիորեն համընկնում է մինչև տվյալ ամսաթիվն ընկերության կողմից պարտականության կատարման արդյունքում հաճախորդին փոխանցված արժեքի հետ:
Արտադրական հզորության վաճառք	Այս պայմանագրերի շրջանակում Ընկերությունն ունի հաճախորդներին անհրաժեշտության դեպքում էլեկտրաէներգիա մատակարարելու հանձն առնված պարտականություն: Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցմանը զուգահեռ: Հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցմանը զուգընթաց՝ հիմք ընդունելով անցած ժամանակահատվածը:
Էլեկտրաէներգիայի փոխանման ծառայություններ	Այս պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը փոխանցում է էլեկրաէներգիան իր միակ հաճախորդի սպառողներին և/կամ իր հաճախորդների այլ ցանցային կայաններին: Հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Հաճախորդները միաժամանակ ստանում և սպառում են էլեկտրաէներգիայի մատակարարման օգուտները՝ վերջինիս մատակարարմանը զուգընթաց, և Ընկերությունը ծառայության նկատմամբ հսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում, այդ իսկ պատճառով, իր կատարման պարտականությունները կատարում է և հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում: Փոփոխական արժեքը, որն իրենից ներկայացնում է սպառված էլեկտրաէներգիայի քանակության և գործող սակագների արտադրյալը, որոշվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջում վերցրած հաշվիչների ցուցմունքների հիման վրա:

(հազար ՀՀ դրամ)

6. Վաճառքի ինքնարժեք

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Գազի գծով ծախսեր	25,257,839	49,091,194
Աշխատավարձ	979,028	1,206,914
Էլեկտրաէներգիա գծով ծախսեր	689,285	195,004
Նյութեր	229,834	102,002
Անվտանգության ծառայության գծով ծախսեր	112,469	142,752
Մաշվածություն և ամորտիզացիա	20,082	31,678
Այլ	75,437	34,317
	27,363,944	**50,803,861**

7. Վարչական ծախսեր

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Աշխատավարձ	386,208	389,673
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	34,204	1,838
Մասնագիտական ծառայություններ	30,000	24,500
Հարկեր	11,315	9,437
Վերանորոգում և սպասարկում	6,346	5,710
Բանկային և ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	5,401	4,619
Մաշվածություն և ամորտիզացիա	3,125	3,707
Այլ	109,140	119,859
	585,739	**559,343**

8. Իրացման ծախսեր

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Էլեկտրաէներգիայի արտահանման հետ կապված ծախսեր	134,382	–
Այլ	920	–
	135,302	**–**

9. Այլ ծախսեր

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Աշխատավարձ	164,805	14,992
Հնարավոր պարտքային կորուստների գծով պահուստ	124,624	–
Անհատույց տրված ակտիվներ	40,050	49,995
Հարկեր և այլ պարտադիր վճարներ	37,325	29,873
Արտարժույթի փոխարկումից վնաս	18,808	42,068
Լիցենզիա	15,300	15,000
Վաճառված պաշարներ	270	7,221
Արժեքների պակասորդներից և փչացումից կորուստներ	–	33,095
Այլ ծախսեր	20,072	15,934
	421,254	**208,178**

(հազար ՀՀ դրամ)

10. Այլ եկամուտ

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Եկամուտ երաշխավորություններից	87,758	331,044
Վարձակալությունից եկամուտ	60,054	53,262
Պաշարների արժեզրկումից կորուստի հակադարձում	55,740	–
Արտարժույթի փոխարկումից օգուտ	6,596	–
Այլ գործառնական եկամուտ	3,488	42,776
	213,636	**427,082**

11. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Տոկոսային եկամուտ	832,639	245,736
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	277,987	81,455
Ֆինանսական եկամուտ	**1,110,626**	**327,191**
Տոկոսային ծախս	(325,267)	(148,388)
Զուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից	–	–
Ֆինանսական ծախս	**(325,267)**	(148,388)
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական եկամուտ	**785,359**	**178,803**

12. Շահութահարկ

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Շահութահարկի գծով ծախս	(117,110)	–
Հետաձգված հարկերի գծով ժամանակավոր տարբերությունների առաջացում և վերականգնում	(313,519)	(34,408)
Շահութահարկի գծով ծախս	**(430,629)**	**(34,408)**

Հայկական ընկերությունների համար շահութահարկի դրույքաչափը 2022թ.-ին կազմել է 18% (2021թ.-ին՝ 18%):

Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

հազ. Դրամ	***2022թ.***	***%***	***2021թ.***	***%***
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	2,634,136		563,030	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	(474,144)	(18)	(101,345)	(18)
Նախկինում չճանաչված հարկային վնասների հարկային հետևանքների ճանաչում	–		46,778	8.3
Չնվազեցվող ծախսեր	43,515	(1.7)	20,159	3.6
	(430,629)	**(16.3)**	**(34,408)**	**(6.1)**

(հազար ՀՀ դրամ)

12. Շահութահարկ (շարունակություն)

ա) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	***2022թ.***	***2021թ.***	***2022թ.***	***2021թ.***	***2022թ.***	***2021թ.***
Հիմնական միջոցներ	–	–	(162,266)	(390,904)	**(162,266)**	**(390,904)**
Պաշարներ	20,758	30,791	–	–	**20,758**	**30,791**
Տրամադրված փոխառություններ	559,272	35,080	–	–	**559,272**	**35,080**
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	42,927	39,932	–	–	**42,927**	**39,932**
Պահուստներ	18,524	4,776	–	–	**18,524**	**4,776**
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	3,060	2,250	–	–	**3,060**	**2,250**
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	25,393	2,906	–	–	**25,393**	**2,906**
Հարկային վնաս	–	149,796	–	–	**–**	**149,796**
	669,934	**265,531**	**(162,266)**	**(390,904)**	**507,668**	**(125,373)**

բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև.

	1 հունվարի 2022թ.	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված**	**Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Հիմնական միջոցներ	(390,904)	(82,926)	311,564	–	(162,266)
Պաշարներ	30,791	(10,033)	–	–	20,758
Տրամադրված փոխառություններ	35,080	(72,521)	–	596,713	559,272
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	39,932	2,995	–	–	42,927
Պահուստներ	4,776	13,748	–	–	18,524
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	2,250	810	–	–	3,060
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	2,906	(15,796)	–	38,283	25,393
Հարկային վնաս	149,796	(149,796)	–	–	–
Հետաձգված շահութահարկ	**(125,373)**	**(313,519)**	**311,564**	**634,996**	**507,668**

(հազար ՀՀ դրամ)

12. Շահութահարկ (շարունակություն)

բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում (շարունակություն)

	1 հունվարի 2021թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապա-րփակ ֆինանսա-կան արդյունքում ճանաչված	Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	31 դեկտեմբերի 2021թ.
Հիմնական միջոցներ	(323,677)	(67,227)	–	–	(390,904)
Պաշարներ	30,791	–	–	–	30,791
Ներդրում ասոցիացված ընկերությունում	(16,084)	16,084	–	–	–
Տրամադրված փոխառություններ	42,737	(40,755)	–	33,098	35,080
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	39,932	–	–	–	39,932
Պահուստներ	4,776	–	–	–	4,776
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	2,070	180	–	–	2,250
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	45,117	(59,588)	–	17,377	2,906
Հարկային վնաս	79,676	70,120	–	–	149,796
Զուտ հետաձգված շահութահարկ	**(94,662)**	**(81,186)**	**–**	**50,475**	**(125,373)**
(Դուրսգրում)/վերականգնում	(46,778)	46,778	–	–	–
Հետաձգված շահութահարկ	**(141,440)**	**(34,408)**	**–**	**50,475**	**(125,373)**

(հազար ՀՀ դրամ)

13. Հիմնական միջոցներ

հազ. Դրամ	*Հողատարածք և շենքեր*	*Շինություններ և մեխանիզմներ*	*Մեքենաներ և սարքավորումներ*	*Անավարտ շինարարություն*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք/Վերագնահատված արժեք					
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,224,109**	**481,621**	**5,353,301**	**–**	**10,059,031**
Ավելացումներ			1,391	45,417	46,808
Օտարումներ	-	(507)	-	-	(507)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,224,109**	**481,114**	**5,354,692**	**45,417**	**10,105,332**
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,224,109**	**481,114**	**5,354,692**	**45,417**	**10,105,332**
Ավելացումներ	10,199	–	2,106	125,669	137,974
Օտարումներ		(3,606)	(2,507)		(6,113)
Վերադասակարգումներ	(603)	(4,693)	5,296	–	–
Կուտակված մաշվածության բացառում	(10,235)	(4,325)	(45,857)	–	(60,417)
Վերագնահատում	85,645	(138,920)	(1,677,636)	–	(1,730,911)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,309,119**	**329,594**	**3,636,066**	**171,086**	**8,445,865**
Մաշվածություն					
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**–**	**–**	**–**	**–**	**–**
Հաշվետու տարվա մաշվածություն	5,745	2,502	28,071	–	36,318
Օտարումներ	–	(2)	–	–	(2)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,745**	**2,500**	**28,071**	–	**36,316**
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,745**	**2,500**	**28,071**	**–**	**36,316**
Հաշվետու տարվա մաշվածություն	4,486	1,801	17,814	–	24,101
Կուտակված մաշվածության բացառում	**(10,231)**	**(4,301)**	**(45,885)**		**(60,417)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**–**	**–**	**–**	**–**
Զուտ հաշվեկշռային արժեք					
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,218,364**	**478,614**	**5,326,621**	**45,417**	**10,069,016**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,309,119**	**329,594**	**3,636,066**	**171,086**	**8,445,865**

20,082 հազար դրամ դրամ գումարով մաշվածության ծախսը՝ գրանցվել է վաճառքի ինքնարժեքի կազմում (2021թ-ին հազար դրամ 31,678), իսկ 3,125 հազար դրամ գումարով մաշվածությունը ծախսը (2021 թ-ին հազար դրամ 3,707) վարչական ծախսերի կազմում:

(հազար ՀՀ դրամ)

13. Հիմնական միջոցներ (շարունակություն)

(ա) Վերագնահատում

Ղեկավարությունը հանձնարարել էր «ԲԻ-ԴԻ-Օ Ըդվայզորի» ՓԲԸ-ին իրականացնել հիմնական միջոցների անկախ գնահատում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Հիմնական միջոցների արժեքը գնահատվել էր զեղչված դրամական հոսքերի մեթոդով և կազմել էր 8,445,865 հազար դրամ, որը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդով օգտագործված ելակետային տվյալները (տես Ծանոթագրություն 2):

Ընկերության հիմնական միջոցների մեծամասնությունը մասնագիտացված բնույթ ունի և հազվադեպ է վաճառվում բաց շուկայում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի հանդիսանում բիզնեսի շարունակելիության մաս: Բացառությամբ փոխադրամիջոցների և որոշ հողատարածքների և շենքերի, որոնք վերագնահատվել են վերջերս շուկայում տեղի ունեցած գործառնությունների տվյալների կամ դիտելի շուկայական ելակետային տվյալների (օրինակ ՝ համադրելի ապրանքների շուկայական գները) հիման վրա, նմանատիպ հիմնական միջոցների շուկան ակտիվ չէ Հայաստանի Հանրապետությունում և չի ապահովում համադրելի հիմնական միջոցների վաճառքների բավարար ծավալ՝ իրական արժեքը գնահատելիս շուկայական մոտեցումն օգտագործելու համար:

Հետևաբար, հիմնական միջոցների իրական արժեքը որոշվել էր օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մոտեցումը: Այս մեթոդը հաշվի է առնում Ընկերության ազատ դրամական հոսքերը ձեռնարկության արժեքը գնահատելու և պահանջվող ճշգրտումները կատարելու համար (այսինքն՝ զուտ շրջանառու կապիտալի և այլ գործառնական երկարաժամկետ ակտիվների հաշվեկշռային արժեքը), որպեսզի դուրս բերվի հիմնական միջոցների արժեքը:

Դրամական հոսքերի ստուգման ընթացքում կիրառվել են հետևյալ հիմնական ենթադրությունները

- Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները իրականացվել է խելամիտ և օժանդակող ենթադրությունների հիման վրա, որոնք ներկայացնում են լավագույն գնահատականը այն տնտեսական պայմանների վերաբերյալ, որոնք գոյություն կունենան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում
- Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները իրականացվել է Ընկերության կողմից հաստատված ամենավերջին ֆինանսական բյուջեների/կանխատեսական գնահատումների հիման վրա, սակայն չեն ներառել ապագա վերակառուցումից կամ ակտիվի արդյունավետության բարելավումից կամ կատարելագործումից առաջացող դրամական միջոցների գնահատված ապագա ներհոսքեր կամ արտահոսքեր
- Հասույթը և ծախսերը ճշգրտվել են գնաճի համապատասխան դրույքների մասով,
- Կիրառվել է 19.06% զեղչման դրույք: Զեղչման դրույքը որոշվել է հիմք ընդունելով տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը:

14. Կապակցված կողմերին տրամադրված փոխառություններ

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Ոչ ընթացիկ		
Տրամադրված փոխառություններ	8,596,710	–
Ընթացիկ		
Տրամադրված փոխառություններ	1,601,511	1,788,311
Ընդամենը տրամադրված փոխառություններ	**10,198,221**	**1,788,311**

(հազար ՀՀ դրամ)

14. Կապակցված կողմերին տրամադրված փոխառություններ (շարունակություն)

Ստորև ներկայացված են տրամադրված փոխառությունների պայմանները:

				2022թ.		2021թ.	
հազ.	*Արժույթ*	*Անվան-ական տոկոսա-դր.*	*Սպաս-վող մարմ-ան տարի*	*Անվանակ. արժեք*	*Հաշվեկշռ. Արժեք*	*Անվանակ. արժեք*	*Հաշվեկշռ. արժեք*
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	10,9%	2022	–	–	1,983,197	1,788,311
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	8,8%	2023	467,481	423,559	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	0%	2023	40,021	39,218	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	0%	2023	35,000	35,000	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	0%	2023	8,500	8,500	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	0%	2023	3,800	3,800	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	0%	2023	3,500	3,500	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	0%	2023	2,500	2,500	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	8,6%	2023	350,000	330,111	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	8,6%	2023	300,000	283,246	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ԱՄՆ դոլար	8,6%	2023	500,000	472,077	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	7,95%	2024	2,369,649	2,369,649	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	9,6%	2027	2,045,336	1,384,481	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	9,6%	2027	934,748	608,126	–	–
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	9,6%	2027	6,244,755	4,234,454	–	–
Ընդամենը վարկեր				**13,305,290**	**10,198,221**	**1,983,197**	**1,788,311**

(հազար ՀՀ դրամ)

15. Ներդրումներ դուստր և ասոցիացված ընկերություններում

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված դուստր և ասոցիացված ընկերություններում ներդրումների հաշվեկշռային արժեքի ընդհանուր վերլուծությունը:

հազ. դրամ	***2022թ.***	***2021թ.***
Ներդրումներ դուստր ընկերություններում		
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	5,349,479	5,349,479
«Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲԸ	2,628	2,628
«Էյչ Էներջի Սոլյուշնս» ՍՊԸ	663,050	–
«Փրոջեքթ Ֆայնընս Հոլդինգ» ՓԲԸ	190,000	–
Ներդրումներ ասոցիացված ընկերությունում		
«Կամսար» ՍՊԸ	419,750	419,750
«Արտույտ ՓԲԸ»	60,723	–
Ներդրումներ համատեղ ձեռնարկումում		
«Գեբեսերտ» ՓԲԸ	30,355	–
	6,715,985	**5,771,857**

16. Պաշարներ

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Նյութեր	136,207	119,788
Պահեստամասեր	21,137	11,329
Այլ	9,256	13,454
	166,600	**144,571**

17. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	***2022թ.***	***2021թ.***
Դեբիտորական պարտքեր դուստր ընկերությունից*	2,059,038	11,283,877
Առևտրական դեբիտորական պարտքեր	4,163,326	3,629,611
Այլ դեբիտորական պարտքեր	170,409	95,649
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(16,644)	–
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**6,376,129**	**15,009,137**

* Գումարն իրենից ներկայացնում է դուստր ընկերությունից («Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲԸ) ստացվելիք դեբիտորական պարտքը սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի 5,000 դրամից 1 դրամ նվազման հետևանքով: Պարտքային և արժութային ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և առևտրական և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստները ներկայացված են Ծան. 22-ում:

18. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Բանկային հաշիվների մնացորդներ	61,232	27,514
Դրամական միջոցները դրամարկղում	29	63
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**61,261**	**27,577**

Ընկերության ենթարկվածությունն արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկերին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են Ծան. 22-ում:

(հազար ՀՀ դրամ)

19. Կապիտալ և պահուստներ

ա) Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության հիմնադիր փաստաթղթերում նշված կապիտալի անվանական գումարը:

Կանոնադրական կապիտալի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուսները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

Հաստատված և ամբողջությամբ վճարված կապիտալը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 7,814,628 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 4,892 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից (2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,814,628 հազ. ՀՀ դրամ):

բ) Վերագնահատումից արժեքի աճ

Վերագնահատումից արժեքի աճը վերաբերվում է հիմնական միջոցների վերագնահատմանը:

գ) Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա իր գործառնական և ռազմական պահանջները բավարարելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման ու հիմնականում Ընկերության գործառնական գործունեության դրամական հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այդ քայլերը՝ Ընկերությունը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Տարվա ընթացում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել: Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջները:

դ) Կապիտալի բաշխում

2022թ. ընթացքում կապակցված կողմերին ցածր տոկոսադրույքով տրամադրված փոխառությունների և երաշխավորությունների արդյունքում ճանաչված կապիտալի բաշխումը կազմում է 3,035,617 հազար դրամ (2021թ-ին՝ 229,941 հազար դրամ):

20. Ստացված վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծան. 22-ում:

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկ	2,369,649	–
	2,369,649	**–**
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկ	1,498,622	3,366,367
Կապակցված կողմերից ստացված փոխառություն	971,079	–
	2,469,701	**3,366,367**
	4,839,350	**3,366,367**

(հազար ՀՀ դրամ)

20. Ստացված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Պայմանները և մարման ժամանակացույցը:

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների պայմանները:

				2022թ.		*2021թ.*	
հազ. Դրամ	*Արժույթ*	*Անվանական տոկոսադրույք*	*Սպասվող մարման տարի*	*Անվանակ. արժեք*	*Հաշվեկշռ. Արժեք*	*Անվանակ. արժեք*	*Հաշվեկշռ. արժեք*
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	6,50%	2022	–	–	3,366,367	3,366,367
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7,95%	2024	2,369,649	2,369,649	–	–
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	8,20%	2023	1,102,986	1,102,986	–	–
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7,33%	2023	395,636	395,636	–	–
Գրավով չապահովված այլ փոխառություն	ՀՀ դրամ	0%	2023	300,000	300,000	–	–
Գրավով չապահովված այլ փոխառություն	ՀՀ դրամ	0%	2023	350,000	350,000	–	–
Գրավով չապահովված այլ փոխառություն	ՀՀ դրամ	0%	2023	230,000	230,000	–	–
Գրավով չապահովված այլ փոխառություն	ՀՀ դրամ	0%	2023	91,079	91,079	–	–
Ընդամենը վարկեր				**4,839,350**	**4,839,350**	**3,366,367**	**3,366,367**

Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում

Հազ. Դրամ	**Ստացված վարկեր և փոխառություն-ներ**
Մնացորդը առ 1 հունվար 2022	**3,366,367**
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	
Մուտքեր վարկերից և փոխառություններից	6,730,929
Վարկերի և փոխառությունների մարում	(4,457,027)
Ընդամենը փոփոխություն ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**2,273,902**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքներ	(806,820)
Այլ փոփոխություններ	
Տոկոսային ծախս	325,267
Վճարված տոկոսներ	(319,366)
Մնացորդը առ 31 Դեկտեմբերի 2022	**4,839,350**

(հազար ՀՀ դրամ)

20. Ստացված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում (շարունակություն)

Հազ. Դրամ	**Ստացված վարկեր և փոխառություն-ներ**
Մնացորդը առ 1 հունվար 2021	**1,853,500**
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	
Մուտքեր վարկերից և փոխառություններից	5,154,978
Վարկերի և փոխառությունների մարում	(1,712,480)
Հաշվանցում դուստր ընկերությունից ստացվելիք դեբիտորական պարտքի հետ	(1,853,500)
Ընդամենը փոփոխություն ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**1,588,998**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքներ	(81,518)
Այլ փոփոխություններ	
Տոկոսային ծախս	45,246
Վճարված տոկոսներ	(39,859)
Մնացորդը առ 31 Դեկտեմբերի 2021	**3,366,367**

21. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Սպառված գազի համար վճարվելիք գումարներ	2,987,164	3,143,896
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	167,302	113,440
Վճարվելիք այլ հարկեր	227,459	111,438
Այլ կրեդիտորական պարտքեր	487,266	104,699
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**3,869,191**	**3,473,473**

Ընկերության ենթարկվածությունը պարտքային և արտարժույթի ռիսկերին և առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժեզրկման կորուստները ներկայացված են Ծան. 22-ում:

22. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ ընկերության ֆինանսական ակտիվները և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ,
- Շուկայական ռիսկ:

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերոնշյալ յուրաքանչյուր ռիսկին Ընկերության ենթարկվածության մասին, ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Ընկերության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները, ինչպես նաև կապիտալի կառավարման Ընկերության մոտեցումը: Հավելյալ քանակական բացահայտումներ ներկայացված են տվյալ առանձին ֆինանսական հաշվետվության տարբեր հատվածներում:

(հազար ՀՀ դրամ)

22. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների հետ կապված:

Ֆինանսական ակտիվների և տրամադրված ֆինանսական երաշխավորությունների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների գործոնների կառուցվածքը, ներառյալ այդ պատվիրատուների արդյունաբերության ճյուղերի ու երկրների դեֆոլտի ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, հատկապես ներկայիս տնտեսական պայմաններում:

Ընկերությունը սահմանափակում է պարտքային ռիսկի իր ենթարկվածությունը՝ առևտրային դեբիտորական պարտքերի համար սահմանելով առավելագույն վճարման ժամկետ մեկ ամիս բոլոր հաճախորդների համար:

Կազմակերպությունը չի պահանջում գրավ դեբիտորական պարտքերի ապահովման համար:

Ընկերության ոչ մի հաճախորդ չունի արտաքին վարկային վարկանիշ: Բոլոր մնացորդները կորպորատիվ հաճախորդներ են և Ընկերությունը բոլոր հաճախորդների պարտքային ռիսկը ցածր է գնահատում: Կազմակերպության հաճախորդներից ոչ մեկի ռիսկը նշանակալի չի աճել՝ սկզբնական ճանաչման պահից:

(հազար ՀՀ դրամ)

22. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ընկերությունը յուրաքանչյուր դիրքում բաշխում է վարկային ռիսկի աստիճանը՝ հիմնվելով այն տվյալների վրա, որոնք որոշվում են կորստի ռիսկը կանխատեսելիս (ներառյալ, բայց չսահմանափակվելով արտաքին վարկանիշներով, աուդիտի ենթարկված առանձին ֆինանսական հաշվետվություններով, կառավարչական հաշիվներով և դրամական հոսքերի կանխատեսումներով, ինչպես նաև հաճախորդների մասին հասանելի մամուլի տեղեկատվությամբ) և կիրառելով փորձագետների վրա հիմնված վարկային դատողություններ: Վարկային ռիսկը որոշվում է քանակական և որակական գործոններով որոնք կարող են լինել սնանկացման ռիսկի ցուցիչներ և կապված են արտաքին կրեդիտ գնահատման Moody's Invector's Services-ի իրականացրած գնահատման հետ:

Ընկերությունը չի պահանջում գրավ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության և տրամադրված փոխառությունների, առևտրական և այլ դեբիտորական պարտքերի, դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ:

Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ

Ընկերությունը չի գտնում, որ այլ կողմերի պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար իր կողմից կնքված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը հանդիսանում են ապահովագրության պայմանագրեր և հաշվառում է այդ պայմանագրերը ՖՀՄՍ 9-ի համաձայն: Ընկերության քաղաքականության համաձայն՝ ֆինանսական երաշխավորությունները տրամադրվում են միայն կապակցված կողմերի պարտավորությունների համար: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը տրամադրել է երաշխավորություններ որոշ բանկերին՝ երկու կապակցված կողմերին տրված վարկերի հետ կապված (Ծանոթագրություն 23): Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատելու համար Ընկերությունը կիրառում է առևտրական դեբիտորական պարտքերի համար օգտագործվող մոտեցմանը նմանատիպ մոտեցում:

Տրամադրված փոխառություններ

Ընկերությունը կապակցված կողմերին տրամադրում է գրավով չապահովված փոխառություններ: Փոխառություններից ոչ մեկը չունի արտաքին վարկանիշ: Ընկերությունը չի ակնկալում, որ փոխառուները չեն կատարի իրենց պարտականությունները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2022թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության և տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ:

(հազար ՀՀ դրամ)

22. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ակնկալվող վարկային կորուստների գնահատում

Հազ. Դրամ	Համախառն մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	Կորստի պահուստը առ 31 դեկտեմբերի 2022թ.	Համախառն մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	Կորստի պահուստը առ 31 դեկտեմբերի 2021թ.
Տրամադրված փոխառություններ	10,326,867	(128,646)	1,808,977	(20,666)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	6,376,129	–	15,009,137	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	61,261	–	27,577	–
	16,764,257	**(128,646)**	**16,845,691**	**(20,666)**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր դրամական միջոցների և դրանց համարժեքների 99% պահվում է ‹‹Moody’s Investor Services›› գործակալության կողմից տրված “Ba3” վարկանիշով բանկում: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկի մնացած 1% պահվում է վարկանիշ չունեցող բանկերում, որոնք սակայն դասված են ընդհանուր ակտիվներով տասը խոշորագույն հայկական բանկերի շարքին և ընկերությունը չի ակնկալում, որ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով արժեքզրկումը չափվել է 12-ամսյա ակնկալվող պարքային կորուստների հիման վրա և արտացոլում է ռիսկին ենթարկվող գործիքների կարճ ժամկետները: Հիմք ընդունելով պայմանագրային կողմերի արտաքին վարկանիշները ընկերութունն իր դրամական միջոցների և դրանց համարժեքների և ավանդների պարտքային ռիսկը գնահատում է ցածր:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգելու:

Ենթարկվածությունը իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ: Աղյուսակներում ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսների վճարումները ՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

Որպես կանոն, Ընկերությունը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

(հազար ՀՀ դրամ)

22. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

31 դեկտեմբեր 2022թ.

Հազ. Դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր	Ցպահանջ	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	5 տարի և ավելի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ								
Գրավով ապահովված բանկային վարկեր	3,868,271	3,868,271	–	1,102,986	395,635	2,369,650	–	–
Գրավով չապահովված այլ փոխառու միջոցներ	971,079	971,079	–	230,000	741,079	–	–	–
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	3,644,123	3,644,123	–	3,644,123	–	–	–	–
Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	5,916,057	5,916,057	–	1,848,264	2,100,300	742,624	1,224,869	–
	14,399,530	**14,399,530**	**–**	**6,825,373**	**3,237,014**	**3,112,274**	**1,224,869**	**–**

31 դեկտեմբեր 2021թ.

Հազ. Դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր	Ցպահանջ	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	5 տարի և ավելի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ								
Գրավով ապահովված բանկային վարկեր	3,366,367	3,398,739	–	3,398,739	–	–	–	–
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	3,362,035	3,362,035	–	3,362,035	–	–	–	–
Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	5,100,534	5,100,534	–	2,387,484	2,713,050	–	–	–
	11,828,936	**11,861,308**	**–**	**9,148,258**	**2,713,050**	**–**	**–**	**–**

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով:

(հազար ՀՀ դրամ)

22. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը բաղկացած է երեք տեսակի ռիսկերից՝ ապրանքների գնի, տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությանը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:

Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի: Շուկայական ռիսկը հիմնականում կապված է Ընկերության համար սահմանված սակագների հետ և ազդում է էլեկտրաէներգիայի ձեռքբերման գնի և այն գնի վրա, որը կարող է սահմանվել օգտագործողների համար՝ սպառված էլեկտրականության համար: Թեև ընկերությունը կարող է ազդել որոշ սահմանված սակագների չափերի վրա, սակագների չափերը գտնվում են վերահսկողության սահմաններից դուրս, և քաղաքական գործոնները նույնպես դեր են խաղում վերջնական սակագների վերաբերյալ որոշում կայացնելիս:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է արտարժույթների փոխարժեքի փոփոխության հետևանքով:

Ընկերությունը ենթակա է արտարժույթային ռիսկի՝ ֆունկցիոնալ արժույթի և վաճառքների, գնումների և փոխառությունների արժույթների անհամապատասխանության հետևանքով: Վերոհիշյալ գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Ստորև ներկայացված է Ընկերության ենթարկվածությունն արժութային ռիսկին:

Հազ. Դրամ	**ԱՄՆ դոլարով արտահայտված 2022թ.**	**ԱՄՆ դոլարով արտահայտված 2021թ.**
Ստացված վարկեր և փոխառություններ	3,868,272	3,366,367
Համախառն ենթարկվածություն	**3,868,272**	**3,366,367**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամ	**Միջին փոխարժեք**		**Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ**	
	2022թ.	**2021թ.**	**2022թ.**	**2021 թ.**
1 ԱՄՆ դոլար	434.86	503.2	393.57	480.14

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի հնարավոր աճը դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնում կանխատեսվող վաճառքի և գնումների ազդեցությունը:

Հազ. Դրամ	***ԱՄՆ դոլար Շահույթ կամ վնաս***
31 Դեկտեմբեր 2022թ. (10% փոփոխություն)	386,827
31 Դեկտեմբեր 2021թ. (10% փոփոխություն)	336,637

(հազար ՀՀ դրամ)

22. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի 10% նվազումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կունենար գումարային առումով նույն , սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

Տոկոսադրույքի Ռիսկը

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրամադրված փոխառությունների և վարկերի վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք):

Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե որ տոկոսադրույքը՝ հաստատուն թե փոփոխուն, ավելի բարենպաստ կլինի Ընկերության համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունը 100 բազիսային կետով կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը (առանց հարկերի) ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ:

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքները՝ տոկոսադրույքի կտրվածքով:

Հազ. Դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2022թ.	**2021թ.**
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ		
Ֆինանսական ակտիվներ	10,198,221	1,788,311
Ֆինանսական պարտավորություններ	(4,839,350)	(3,366,367)
	5,358,871	**(1,578,056)**

23. Հանձնառություններ

Ընկերությունը ֆինանսական երաշխավորության պայմանագրերը հաշվառում է ՖՀՄՍ 9-ի համաձայն: Ստանդարտի համաձայն պայմանագիրը սկզբնապես պետք է չափվի իրական արժեքով, իսկ հետագայում՝ հետևյալներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ին համապատասխան որոշված կորստի պահուստից և սկզբանապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Ընկերության քաղաքականության համաձայն՝ ֆինանսական երաշխավորությունները տրամադրվում եմ միայն ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը երաշխավորել է իրեն կապակցված կողմերի բանկային վարկի պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային գումարը և մնացորդը կազմում էր 5,916,057 հազար դրամ, (2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,100,534 հազար դրամ):

Պայմանագրի համաձայն երաշխավորողներն անդառնալիորեն և անվերապահորեն՝

- երաշխավորում են բանկի նկատմամբ Վարկային պայմանագրով ստանձնած բոլոր պարտականությունների ժամանակին կատարումը երաշխավորողների կամ փոխառուների կողմից,
- հանձն են առնում, որ եթե փոխառուն չվճարի որևէ գումար պայմանագրով սահմանված ժամկետում կամ դրա հետ կապված, երաշխավորողն անմիջապես ըստ պահանջի կվճարի այդ գումարն այնպես, ինչպես կաներ, եթե այն լիներ հիմնական պարտապանը:

(հազար ՀՀ դրամ)

24. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում:

բ) Դատական վարույթներ

Ընկերությունը ընդգրկված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

գ) Շրջակա միջավայրի պահպանություն

Ընկերության գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ պետական օրենքներով և կանոնակարգերով, որոնք կարգավորում են օդը և ջուրն աղտոտող նյութերի արտանետումը, թափոնների արտանետումը, գործածումը և պահպանումը: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը բավարարել է շրջակա միջավայրի պահպանության հետ կապված կառավարության պահանջները, այդ իսկ պատճառով ընկերությունը պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ ղեկավարութունը հնարավոր չի համարում նման պայմանական պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Այնուամենայնիվ, բնապահպանության հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրությունը զարգացման փուլում է և այդ օրենսդրության և վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են էական փոփոխությունների հանգեցնել ապագայում:

դ) Պայամանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են

սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է 3 տարի:

Այս հանգամանքները ՀՀ-ում կարող են առաջացնել այլ երկրների համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել առանձին ֆինանսական հաշվետվությունների տեսանկունից, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

25. Կապակցված կողմեր

ա) Վերահսկողություն

Ընկերության մայր կազմակերպությունն է ‹‹Տաշիր Կապիտալ›› ՓԲԸ-ն է և վերջնական հսկող անձն է պրն. Սամվել Կարապետյանը:

Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվություններ:

(հազար ՀՀ դրամ)

25. Կապակցված կողմեր (շարունակություն)

բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում:

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Աշխատավարձ և պարգևատրումներ		
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	129,774	175,255
	129,774	**175,255**

գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		**Մնացորդը առ 31 դեկտեմբեր**	
	2022	**2021**	**2022**	**2021**
Ապրանքների և ծառայությունների վաճառք				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ	19,069,551	51,525,147	122,863	3,634,745
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ	278,749	195,004	32,562	23,811
Տրամադրված փոխառություններ				
Վերջնական մայր կազմակերպություն	7,004,864	200,000	5,800,769	1,788,311
Դուստր ընկերություններ	2,500	(750,000)	2,500	–
Այլ կապակցված կողմեր	6,459,776	–	4,394,952	–
Ստացված փոխառություններ				
Դուստր ընկերություններ	1,380,000	(1,853,500)	880,000	–
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր				
Մայր ընկերություն	3,254	4,203	3,254	4,203
Այլ կապակցված կողմեր	137,818	11,941	137,818	11,941
Տոկոսային եկամուտ				
Վերջնական մայր ընկերություն	178,840	155,139	–	75,242
Այլ կապակցված կողմ	–	71,278	–	–
Այլ				
Մայր ընկերությանը տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	1,848,264	2,387,484	1,848,264	2,387,484
Այլ կապակցված կողմերին տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	4,067,793	2,713,050	4,067,793	2,713,050
Ներդրումներ				
Ներդրումներ դուստր ընկերություններում	853,050	–	6,205,157	11,283,877
Ներդրումներ ասոցիացված ընկերություններում	60,723	–	480,472	–
Ներդրումներ համատեղ ձեռնարկումում	30,356	–	30,356	–